Արձանագրությունթիվ 6
(նիստըկայացել է 2023 թվականիդեկտեմբերի 27-ին)

Նիստին մասնակցում էին Արմավիրիմարզի «Նորապատի միջնակարգ դպրոց» և «Մայիսյանիմիջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) 14 անդամներից 10-ը:
Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էին Նորապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Ն.Սահակյանը, Մայիսյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանը, հաշվապահներ Ա. Ռուբենյաննու Հ.Մարգարյանը:

Օրակարգում՝
1.Օրակարգի հաստատում
(զեկ.՝ Մ.Հովհաննիսյան)
2. 2023թ. Ֆինանսական նախահաշվում հոդվածային փոփոխություն կատարելու մասին:
(զեկ.՝ Հ.Մարգարյան, Ա.Ռուբենյան)

3. Տնօրենի պաշտոնի թափուր աշխատատեղի մրցույթի մասին:
(զեկ.՝ Ա.Սարուխանյան)
4. 2023թ.դպրոցների «Զարգացման ծրագրի» հաշվետվություն:
(զեկ.՝ Ա.Սարուխանյան, Ն.Սահակյան)

Օրակարգում՝
1.Լսեցին- Կառավարման խորհրդի նախագահ Մ.Հովհաննիսյանին: Նա ներկայացրեց օրակարգը:
ՈՐՈՇՈՒՄ Է
Ընդունելմիաձայն:
Օրակարգում՝
2. 2023թ ֆինանսական նախահաշվի քննարկում
(զեկ. ՝Հ.Մարգարյան, Ա.Ռուբենյան)

Լսեցին – Մայիսյանի միջնակարգ դպրոցի հաշվապահ Հ. Մարգարյանի տեղեկատվությունը 2023թ. Ֆինանսական նախահաշվի վերաբերյալ: Նանշեց, որ ԲՏՃՄ ոլորտի դասավանդող ուսուցիչների համար վարձատրության գումարը կազմում է 347 300 ՀՀ դրամ, իսկ ուսուցիչների կամավոր ատեստավորման նպատակով հատկացված գումարը ավելացել է 165 600 ՀՀ դրամով, որը անհրաժեշտ է տրամադրե լհետևյա լհոդվածին.

4111 հոդվածինավելացնել 512 900 հազ.դրամ

Լսեցին – Նորապատի միջնակարգ դպրոցի հաշվապահ Ա. Ռուբենյանը 2023թ. Ֆինանսական նախահաշվի վերաբերյալ տեղեկացրեց, որ Հիմք ընդունելով 2023թ. դեկտեմբերի 20-ին կայացած միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) նիստի N 5 քաղվածքը Նորապատի միջնակարգ դպրոցը տարեվերջյան նախահաշվում

կատարում է ավելացում <<այլ նպաստներ բյուջեից>> ստացված գումարի, որը ավելացվում է 4111 հոդվածին.

Ընդամենը 2023թ.-ի բյուջեն կազմում է 71317.4 հազ. դրամ:

ՈՐՈՇՈՒՄ Է:

1.Հավանությունտալ «Մայիսյանի միջնակարգ դպրոց» և «Նորապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների 2023 թ. ֆինանսական նախահաշիվներին:

2..Հանձնարարել դպրոցի տնօրեններին սույն որոշման քաղվածքը նախահաշվի հետ ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստի հաստատմանը:

Օրակարգում՝
3. Տնօրենի պաշտոնի թափուր աշխատատեղի մրցույթի մասին:
(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Լսեցին-3.Մայիսյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը Մայիսյանի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր աշխատատեղի մրցույթի մասին: Նա մասնավորապես նշեց, որ իր պաշտոնավարման 5 տարին լրանում է 2024թ. փոտրվարի 14-ին, և հաշվի առնելով ՀՀ 2023թ. փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշումը՝ 2023թ. դեկտեմբերի 14-ից հայտարարվել է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

ՈՐՈՇՈՒՄ Է:
Ի գիտություն ընդունել Ա. Սարուխանյանի տեղեկատվությունը:

Օրակարգում՝
4. 2023թ. Զարգացման ծրագրի հաշվետվությունը:
(զեկ.՝ Ա.Սարուխանյան, Ն.Սահակյան)

Լսեցին-4.Մայիսյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի և Նորապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Ն.Սահակյանի հաշվետվությունները 2023թ. «Զարգացման ծրագրի»կատարողականի վերաբերյալ:
Մայիսյանի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Սարուխանյանը նշեց, որ դպրոցում բազմաթիվ դրական փոփոխություններ են եղել.

- 2023թ. մարտ ամսից գործում է վերանորոգված և լիովին կահավորված ճաշարանը:

- 2023թ. սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորվել են դպրոցի 5 ուսուցիչներ. 3 տարվա ընթացքում մանկավարժական համակազմի 7 ուսուցիչ (30%) ատեստավորվել են:
- Վերանորոգվել և կահավորվելեն 4 լաբորատորիաներ:
- 2023թ. դպրոցի 13 շրջանավարտներից 4-ը ընդունվելեն ՀՀ պետական բուհեր:
- Կազմակերպվել են համադպրոցական և արտադպրոցական մի շարք միջոցառումներ, մրցույթներ, վիկտորինաներ:
- Օլիմպիադաներում մեր աշակերտները գրանցել են հաջողություններ, Գևորգ Վարդանյանը ՆԶՊ-ից մասնակցել է հանրապետական օլիմպիադայի, Սաթենիկ Գալստյանը և Լուսինե Հովսեփյանը՝ հայոց լեզվից ու անգլերենից:
- Ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա է. Գևորգ Վարդանյանն ընդունվել է Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարան, իսկ Պարույր Հովսեփյանը՝ Արմենակ Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան:
- Կազմակերպվել են միշարք միջոցառումներ, քննարկումներ՝ նվիրված աշակերտների իրավագիտակցության բարձրացմանը (թրաֆիքինգ, բուլինգ), տեղի են ունեցել միշարք հանդիպումներ քննչական, անչափահասների, պարեկային վարչությունների և ԶՈՒ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ:

Նորապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Ն. Սահակյանը նշեց, որ 2023 թվականի հունվարից դեկտեմբեր ամիսներին դպրոցում կատարվել են մի շարք աշխատանքներ՝ հիմք ընդունելով դպրոցի «Զարգացման ծրագիրը»: Այսպես՝

.Կատարվել է ուսումնական գործընթացի պլանային և թեմատիկ առարկայկան վերահսկողություն բաց դասեր, խմբային և նախագծային աշխատանքներ, միջոցառումներ,ցուցահանդեսներ. վերապատրաստված ուսուցիչների գործերի համալիր ստուգում, լիազոր մարմնիկողմից կատարված մշտադիտարկմանարդյունքների քննարկում, որոշումների ընդունում և կատարում, հաստիքային և կադրային փոփոխություններ:

.Անցկացվել են սեմինարներ և քննարկումներ մանկավարժներին մասնագիտական և մեթոդական կարողունակությունների զարգացման դաստիարակության կազմակերպման թեմաներով՝ԿԶՆԱԿ-ի կողմից «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տնօրենի տեղակալների վերապատրաստումներ» դասընթաց. մասնակիցները ստացել են վկայականներ:

.ՀՀ ԿԳՄՍ նախարարությանՀՄԿ-ի կողմից կատարվել է ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստում և մենթորական աջակցություն և տրվել կրեդիտային վկայականներ ու հավաստագրեր:

.Արմավիրի ՏՄԱԿ-ի,«Չնափոխվող կրթություն» կրթական հիմնադրամիկողմից անցկացվել են սեմինարներ ծնողական և մանկավարժական համակազմի համար:

.ԴԱԿ Հ. Գաբրիելյանը մասնակցել է ԱԻՆ-ի կողմից աղետների ռիսկի նվազեցման նպատակով կազմակերպված դասընթացին՝համագործակցելով ԱԻՆ, ՏԻՄ և ՈՈԻ-ի հետ:

.Դեկտեմբերի 11-ին Մարդու իրավունքների օրվա կապակցությամբ «Հայաստանի մանուկներ» COAF հիմնադրամի նախաձեռնությամբ դպրոցը հյուրընկալել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանին՝ նպաստելով սովորողների ինքնավարության և իրավունքների վերաբերյալ գիտելիքների խորացմանը:

.2023թ-ի հունվարից մինչև դեկտեմբեր «Հայաստանի մանուկներ» COAF հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Ինֆորմատիկայի» արտադպրոցական խմբակի աշխատանքները ավարտվել են՝ապահովելով 3-5-րդ դասարանի սովորողների համար համակարգչային խորը գիտելիքներ:

.«Հայաստանի մանուկներ» COAF հիմնադրամի նախաձեռնությամբ դպրոցն ընդգրկվել է «Առողջություն խթանող դպրոց» ծրագրում՝ նպաստելով համայնքում առողջ ապրելակերպի զարգացմանը, որի շրջանակներում կազմակերպվել են սպորտլանդիաներ, իրազեկման արշավներ, բեմադրություններ, զրույց-սեմինարներ նայլն:

.ՀՀ Առողջապահության նախարարության կազմակերպած «Առողջ ապրելակերպը սովորություն է» խորագրով քայլարշավին դպրոցն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ:

.Աշակերտների իրավագիտակցության բարձրացման նպատակով պարբերաբար կազմակերպվել են զրույց-քննարկումներ, հանդիպումներ քննչական, անչափահասների, պարեկային վարչությունների և ՋՈԻ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ՝ :

.Դպրոցն ունի կամավոր ատեստավորված 3 ուսուցիչ. Ազարյան Սուսաննա՝ 40%, Մանուկյան Դիանա՝ 50%, Քոլոզյան Մարիա՝ 30%

1-ին աստիճանի տարակարգ ունեցող 2 ուսուցիչ՝ Գրիգորյան Գայանե և Սիմոնյան Արմինե:

.Ուսուցչի թափուր տեղերը համալրվել են մրցութային կարգով, իսկ չհամալրված տեղերի համար, ըստ կարգի, պարբերաբար տրվում են հայտարարություններ:

.Դպրոցի 2022-2023 ուստարավա շրջանավարտներից բուհ ընդունվել են 11-ը, որից Գարիկ Բարեղամյանը՝ Ա. Խամփերյանցի անվան ռազմական ավիացոն համալսարան:

.7-րդ դասարանի սովորող Անժելա Դավթյանը ճանաչվել է «Օժտված երեխաներ Քվանտ-2023» հաղթող, մասնակցել է մաթեմատիկայի առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին:

.Դեռևս 2022թ-ի սեպտեմբերին հիմնովին նորոգված և անհրաժեշտ գույքով համալրված դպրոցական ճաշարանը ապահովում է անվճար տաք սնունդ 1-4-րդ դասարանների 93 սովորողների համար:

.Դպրոցի ֆինանսական միջոցներով իրականացվել են ներքին հարդարման մասնակի նորոգումներ, նյութատեխնիկական բազան համալրվել է «Տիր» տեսակի ուսումնական 3 հրացանով:

Փոխվել է դպրոցի գլխավոր մուտքի դուռը, դասասենյակների, սանհանգույցների կոտրված ապակիները, 2 խորքային հորերի համար ջրի պոմպերը, կոսմետիկ վերանորոգվել է 1 սանհանգույց:

.Դպրոցի մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմին 2023 թվականի հունվար և մարտ ամիսներին տոների կապակցությամբ տրվել է պարգևատրում:

ՈՐՈՇՈՒՄ Է:

1. Հավանության արժանացնե լտնօրեններ Ա.Սարուխանյանի և Ն. Սահակյանի ներկայացրած հաշվետվությունները:
2. Առաջարկեցին տնօրեններ Ա.Սարուխանյանին և Ն.Սահակյանին շարունակել իրականացնել դպրոցների «Զարգացման ծրագրի» նախատեսված կետերը՝ բոլոր միջոցներով նպաստելով կրթության որակի բարձրացմանը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Մ.Հովհաննիսյան